Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Մտեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format
Adapt — remix, transform, and build upon the material

1198բ
10

Պրոլետարներ բոլոր երկրների, միացե՛ք.

ՍՊԱՌՈՂԱԿԱՆ ԿՈՈՊԵՐԱՑԻԱՅԻ ԿՈՒԼՏ-ԱՇԽԱՏՈՂՆԵՐԻ
I-ԻՆ ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԱԿՑՈՒԹՅԱՆ

# ԲԱՆԱՁԵՎԵՐԸ

(1—4-ը ՄԱՐՏԻ 1930 Թ.)

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ „ՀԱՅԿՈՈՊ"-Ի
ՅԵՐԵՎԱՆ 1930 Թ.

Պրոլետարներ բոլոր երկրների, միացե՛ք

334,5

ՍՊԱՌՈՂԱԿԱՆ ԿՈՈՊԵՐԱՑԻԱՅԻ ԿՈՒԼՏ-ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ
I-ԻՆ ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԱԿՑՈՒԹՅԱՆ

# ԲԱՆԱՁԵՎԵՐԸ

(1—4-ը մարտի 1930 թվի)

A 39489

Հաստատված է
Հայկոոպի վարչության նիստում 7/III 1930 թ.)

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ „ՀԱՅԿՈՈՊ"-Ի
ԵՐԵՎԱՆ 1930 Թ.

ՀԱՅԿՈՈՊԻ ՏՊԱՐԱՆ
ՄԱՐՔՍԻ ՓՈՂ. № 29
ԳՐԱՌԵՊ. № 5053բ.
ՏԻՐԱԺ 2000 պ. 123

# ԿՈՈՊ. ԿԱԴՐԵՐԻ ՊԱՏՐԱՍՏՄԱՆ ՅԵՎ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ՄԱՍԻՆ

1. Սոցիալիստական շինարարության հարաճուն վերելքը քաղաքում, համատարած կոլլեկտիվացումը, գյուղատնտեսության սոցիալիստական վերակառուցումը գյուղում ու հնգամյակի գերակատարումը 4 տարում, Կոոպերացիայի առևտրական կշռի մեծացումը, նրա ոպերատիվ գործունեության կատարելագործման անհրաժեշտությունը, առանձին միավորների խոշորացումը, վորպես սոցիալիստական շինարարության կարևոր ազդակներից մեկը, կոոպ. ապարատի զտումը և նրա բանվորականացումը մեր առաջ խնդիր են դնում պատրաստել նոր կադր և վերապատրաստել յեղածը այն հաշվով, վորպեսզի մենք ապահոված լինենք դասակարգայնորեն զգոն և քաղաքականապես կայուն կադրով, վորն իր առորյա գործողության ընթացքում պաշտպանում ե դասակարգայնորեն ճիշտ գիծ և իրականացնում է կուսակցության տված դիրեկտիվները լրիվ և ժամանակին։

2. Կոոպ. կադրերի ուսուցումը պետք է տարվի սիստեմատիկորեն, կապված անընդհատ գործնականի հետ, վորը մեզ հնարավորություն կտա վոչ միայն տեխնիկներ, այլ և սոցիալիստական շինարարության ակտիվ ժամարտիկներ պատրաստել։ Մեր բոլոր ուսումնական հաստատությունները պետք է այնպես կառուցված լինեն, վորպեսզի մենք ստանանք սպառողական ցանցի բոլոր ողակների համար ակտիվ աշխատողներ։

3. Մեր մինչ այժմ գոյություն ունեցող ուսումնական հիմնարկները (Տեխնիկում, 2-րդ աստիճանի դպրոց, կոոպ թեքումով և այլն) իրենց կառուցվածքով չեն համապատասխանել մեր ցանցի պահանջներին և բնականաբար չեն կարողացել բավարարել այդ պահանջներին, վորը մեր առաջ խնդիր է դնում վերակառուցել տվյալ ուսումնական հաստատությունները, այն հաշվով, վոր կարողանա լրիվ չափով սպասարկել ցանցի պահանջներին

## 1. Կոոպ. տեխնիկումը

4. Կոոպերատիվ տեխնիկումը հանդիսանալու յե ուսումնական այն հաստատությունը, վորտեղից մենք պարբերաբար ստանալու յենք սպառողական ցանցի համար միջին աշխատողներ, սակայն Տեխնիկումն իր ներկա—

վիճակով (ավելի ճիշտ իր անվորոշ վիճակով) հնարավորություն չի ունե-նա սպառցանցի մարդկային ուժերի աղբյուր հանդիսանալու։

Անհրաժեշտ է տեխնիկումը ամբողջապես յենթարկել Հայկոոպին, վե-րակազմակերպել ուսումնական պլանը և մտցնել մասնագիտական թեքում-ներ համակերպելով այն մեր ներկա ցանցի ընդհանուր պահանջներին։

## 2. Բատրակ-չքավորական յերկամյա դասընթացներ

5. Այս տիպի դպրոցը միանգամայն նոր է ԽՍՀՄ սահմաններում և խպառ բացակայում է մեզ մոտ, այդ ուսումնական հիմնարկությունը տա-լու յե միջին տեխնիքական կվալիֆիկացիայի աշխատողներ (կինո-ապարատի մեխանիկներ, կուլտուրական ապրանքի վաճառողներ և այլն և այլն)։

## 3. Գյուղական կոոպերատիվական աշակերտության դպրոց

6. Այս տիպի դպրոցի անհրաժեշտությունը բղխում է գյուղատնտե-սության վերակառուցումով։ Մեզ անհրաժեշտ է ստեղծել այնպիսի մի դըպ-րոցական հաստատություն, վորն իր յեռամյա ուսումնական ժամանակա-շրջանում կարողանա բավարարել մեր գյուղի ցանցը հաշվային և առև-տրական, աշխատողներով։

## 4. Դպրոց-խանութ

7. Մինչ այժմ սպառկոոպերացիայի ուսումնական հաստատություննե-րից միայն դպրոց խանութն է, վորը բավական քաղաքացիականություն է ստացել իր նպատակային դրույթով և գործնական հետևանքներով։

Մինչ ստացիոնար դպրոցների կարգավորումը մենք պետք է դպրոց-խանութի գոյությունը ապահովենք, վորպես մեր ցանցի ամենակարևոր, առևտրական, ողակի, վորակյալ կադրեր մատակարարող դպրոցական հաստատության։

## 5. Այլ դասընթացներ

8. Նպատակ ունենալով բանվորականացնել կոոպերատիվ ապարատը, մենք դեռ պիտի պահպանենք 4—6 ամսյա դասընթացների գոյությունը, վորը հատկապես պիտի կազմակերպվի առաջ քաշված բանվորներին կո-ոպերատիվ մասնագիտական կրթություն տալու համար։

9. Մեր ցանցը, հատկապես մեծ բանկոոպներն ու քաղսպառկոոպները նույնպես գործնական աշխատանք պետք է կատարեն իրենց համար նոր

կադրեր պատրաստելու և յեղածներին վերապատրաստելու համար։ Այդ իսկ նպատակով նրանք պետք է տեղերում կազմակերպեն կարճատև նպատակային և այլ դասընթացներ, ընդգրկելով տարեկան վոչ պակաս քան 500 աշխատողներ։

## 6. Հեռակա կոոպերատիվ դասընթացներ

10. ա) Մեր նպատակը չի լինելու միայն պատրաստելու նոր կադրեր, այլ և վերապատրաստելու յեղածը։ Դրա համար անհրաժեշտ է պահպանել 1-2 ամսյա դասընթացքները։

բ) Հեռակա դասընթացքները մեր կադրերի վերապատրաստման գործում հանդիսանալու յեն ամենակարևոր գործոններից մեկը։ Իր աշխատանքների մեթոդներով նա հնարավորություն է ստեղծում չկտրելով մեր կադրերին իրենց անմիջական աշխատանքներից՝ վերապատրաստվել ու մասնագիտանալ։

գ) Պետք է այնպես դասավորել հեռակա դասընթացների աշխատանքները, վոր մինչև հնգամյակի վերջը մեր միջին աշխատակիցների վողջ կազմը անցնի վերավորակավորման այդ դպրոցը։

## 7. „Ծանր արդյունաբերություն“

11. Մեր կուսակցության գլխավոր գիծը կայանում է նրանում, վոր մենք ստեղծենք արտադրության միջոցներ արտադրող՝ արտադրական միջոցներ։

ա) Մեզ անհրաժեշտ է ինչպես տեսանք սեփական ուժերով ստեղծել կոոպերատիվ կադր, սակայն մենք մարդկային ուժեր, դասատուների կադր չունենք, կամ համարյա բացակայում են։

բ) Անհրաժեշտ է մոտ ապագայում ձեռք բերել անհրաժեշտ դասախոսներ (բարձր դպրոցներից մեր թոշակառուները, կամ հին մանկավարժներ) մեր ուսումնական ձեռնարկությունները լրիվ ապահովելու համար։

12. Վոչ սակավ, յեթե վոչ ավելի կարևորագույն նշանակություն ունի մեր կադրերը պատրաստելու համար դասարանների և հանրակացարանների բացակայությունը։

Անհրաժեշտ է կառուցել սեփական դպրոցների համար շենքեր և ոժանդակ շենքեր։

13. Ֆինանսական միջոցների խնդիրն ամենահիմնականն է։ Մեր կադրերի պատրաստման համար անհրաժեշտ է մոտ 800 հազար ռուբլի, սակայն միայն կուլտ ֆոնդով վոչինչ չի դուրս գա։ Մեզ անհրաժեշտ է ստեղծել կադրերի պատրաստման և վերապատրաստման համար հատուկ ֆոնդ։

## 8. Կոոպ. կադրերի պատրաստման յեվ վերապատրաստ. հնգամյակը

### Ա. Պատրաստելու գծով

| | |
|---|---|
| 1. Կոոպ-ղեկավար և միջին աշխատողներ | 150 հոգի |
| 2. Գործակատարներ | 400 » |
| 3. Հաշվապահներ և հաշվետարներ | 200 » |
| 4. Ստատիստիկներ | 20 » |
| 5. Պլանովիկ-էկոնոմիստներ | 20 » |
| 6. Ինժեներներ և տեխնիկներ | 10 » |
| 7. Կուլտ-հրահանգիչներ | 30 » |
| 8. Խիմիկ լաբորանտներ | 5 » |
| 9. Հրահանգիչներ Հայկոոպի և ցանցի համար | 20 » |
| 10. Ժողսննդի աշխատողներ | 250 » |
| 11. Պահեստապետներ | 15 » |
| 12. Էքսպեդիտորներ | 10 » |
| 13. Գրքի աշխատողներ | 200 » |
| 14. Կինո ռադիո մեխանիկներ | 100 » |
| 15. Մթերման աշխատողներ | 50 » |
| 16. Փուփ աշխատողներ | 25 » |
| 17. Հրուշակային աշխատողներ | 20 » |
| 18. Մսագործներ | 15 » |
| 19. Շրջիկ առևտրի մասնագետներ | 100 » |
| 20. Կենցաղային աշխատողներ | 20 » |
| Ընդամենը | 1660 հոգի |

### Բ. Վերապատրաստման գծով

| | |
|---|---|
| 1. Կոոպ-ղեկավար և միջին աշխատողներ | 200 հոգի |
| 2. Գործակատարներ | 2800 » |
| 3. Հաշվապահներ և հաշվետարներ | 280 » |
| 4. Հրահանգիչներ | 30 » |
| 5. Ժողսննդի աշխատողներ | 200 » |
| 6. Պահեստապետներ | 20 » |
| 7. Էքսպեդիտորներ | 5 » |
| 8. Գրքի աշխատողներ | 25 » |
| 9. Կինո-ռադիո մեխանիկներ | 40 » |
| 10. Պլանավիկ-էկոնոմիստներ | 5 » |
| 11. Վիճակագիրներ | 5 » |
| 12. Փուփ աշխատողներ | 100 » |
| 13. Հրուշակային աշխատողներ | 20 » |
| 14. Մսագործներ | 15 » |
| 15. Շրջիկ առևտրի մասնագետներ | 100 » |
| Ընդամենը | 3215 հոգի |

Այս բոլորից 5-ամյակի առաջին ուսումնական տարում (28—29 ա.) պատրաստել ենք՝

| ՆՆ ըստ կարգի | Ուսումնական կուրսային ձեռնարկներ | Սովորողների քանակը | Սոցիալական դրությունը | | | | | | Կուսակցական. | | | Սեռ | | Կուրսերի տևողությունը |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | Բանվոր | Չքավոր | Բատրակ | Միջակ | Ծառայող | Այլ | Կուսակց. | ԼԿԵՄ | Անկուս. | Իգական | Արական | |
| 1 | Կոոպ-խմբակավարների | 52 | 3 | 18 | 17 | — | 14 | - | 22 | 18 | 12 | 5 | 47 | 3 շաբաթյա |
| 2 | Հաշվապահների . . | 39 | 4 | 13 | 1 | 8 | 8 | — | 6 | 18 | 15 | 5 | 34 | 6-ամսյա |
| 3 | Խանութ-դպրոց . . | 36 | 11 | 17 | 4 | — | 4 | — | 7 | 26 | 3 | 7 | 29 | » |
| 4 | Գյուղկոոպների նախագահ . . . | 64 | 6 | 13 | 5 | 12 | 20 | 8 | 56 | — | 8 | 2 | 62 | 3-շաբաթյա |
| 5 | Կինո-մեխանիկների . | 22 | 22 | — | — | — | — | — | — | 6 | 16 | — | 22 | » |
| 6 | Զորացրված բանակայինների . . | 33 | 6 | 13 | 6 | 7 | 1 | — | 12 | 8 | 13 | — | 33 | 2-շաբաթյա |
| 7 | Կոոպ-ակտիվի . . | 33 | 3 | 11 | 6 | 12 | — | 2 | 2 | 31 | — | 4 | 29 | » |
| 8 | Կոոպ-տեխնիկում . . | 66 | 11 | 23 | 8 | — | 10 | 8 | 2 | 58 | — | 4 | 56 | 3 տարվա |
| 9 | ՍԽՀՄ ԲՈՒՀ-եր գործուղղվածներ . | 13 | 4 | — | — | — | 9 | — | 8 | 5 | » | 1 | 12 | Զանազան ժամկետներով |
| | Ընդամենը . | 352 | 69 | 113 | 47 | 39 | 66 | 18 | 115 | 170 | 67 | 23 | 324 | |

## 9. Եզրակացություն

ա) Կադրերի պատրաստման և վերապատրաստման խնդիրը պետք է ամբողջ ցանցի կողմից դրվի ամենակարևորագույն աստիճանի վրա։

բ) Ամբողջ ցանցը պիտի հոգատար և լուրջ վերաբերմունք ցույց տա մեր կոոպերատիվ դպրոցական հաստատություններին—գործուղղելով այնտեղ հասարակական կոոպերատիվ աշխատանքներում կոփված մարդիկ, վորոնք վերջացնելով տվյալ դպրոցն իրենց ստացած գիտությունը, կկարողանան գործադրել կյանքում ճիշտ և նպատակին։

գ) Ստեղծել և ապահովել համապատասխան հասարակայնություն մեր դպրոցական հաստատությունների գործունեության շուրջը, ապահովելով վերջինիս լսողների սոցիալական վիճակը, ֆինանսական, բնակարանային և վորն ամենակարևորն է դասատուների կադրով։ Միայն այդ դեպքում մենք կիրականացնենք մեր առաջ դրված ծանր և պատասխանատու գործը—կոոպերատիվ կադրերի պատրաստման գործը։

# ՍՊԱՌԿՈՈՊԵՐԱՑԻԱՅԻ ԱՇԽԱՏԱՆՔԸ ԿԻՆՈ-ՌԱԴԻՈՖԻԿԱՑԻԱՅԻ ԱՍՊԱՐԻԶՈՒՄ

Կուլտուրական աշխատանքի ամենամասսայական և եֆեկտավոր ձևերից մեկը կինո-ռադիո աշխատանքն է։ Այս ասպարիզում Սպառողական կոոպերացիան վերջին տարվա ընթացքում տարել է ծրագրային աշխատանք և ձեռք է բերել վորոշակի հաջողություններ։

1. Այսպես օրինակ՝ 1928 թվի հոկտեմբերի մեկին Սպառկոոպերացիայի սիստեման ուներ ընդամենը 2 շրջիկ կինո և 14 ռադիո ընդունիչ։ 1929 թ. հոկտեմբերի 1 ին 14 կինո-ռադիո ընկերություն 16 շրջիկ կինո ապարատով և 33 ռադիո ընդունիչներ։

1930 թ փետրվարի 15 ին Սպառկոոպերացիայի սիստեման ուներ՝ 21 կինո-ռադիո ընկերություն, վորոնց մեջ մտել եյին 98 կոոպերատիվներ, այսինքն՝ Սպառկոոպների 95 տոկոսից ավելին։

Այդ 21 կինո-ռադիո ընկերությունների գծով առ 15 ն փետրվարի 1930 թ. աշխատում եր 25 շրջիկ կինո և կային 42 ռադիո ընդունիչներ։

1930 թվի փետրվարի 15-ին Հայաստանում աշխատող բոլոր շրջիկ կինոների թիվն եր 31, վորից 25-ը յեղել է Սպառողական կոոպերացիայի սիստեմայինը։

1928 թվի հոկտեմբերի մինչև 1929 թվի 1-ն հոկտեմբերի Սպառկոոպերացիայի շրջիկ կինոները գյուղերում ցույց են տվել 1860 կինո սեանս, վորոնց ներկա յեն յեղել 650,000 դիտողներ, վորից մոտ 35 տոկոսը կանայք։

1929 թվի 1-ն հոկտեմբերից մինչև 1930 թվի 15 փետրվարի Սպառկոոպերացիայի շրջիկ կինոները գյուղերում ցույց են տվել 713 կինո սեանս 250913 հաճախորդներով, վորից կանայք 94,000 հոգի։

Սպառկոոպերացիան կինո ռադիո աշխատանքների վրա ծախս է կատարել 1927—28 տնտ. տարում 3400 ռ., 1928—29 տնտ. տարում 46,000 ռ., 1929—30 տնտ. տարվա 4 ամսում 34,760 ռ.։

1928—29 տնտ. տարում կազմակերպված են կինո-մեխանիկների վերապատրաստման կուրսեր 24 հոգու և պատրաստման համար 5 հոգու (վերջինս քաղլուսվարի հետ միասին)։

Սպառկոոպերացիայի շրջիկ կինոների ցանցն ստեղծվել է Հայաստանի բոլոր գավառներում և ընդգրկում են համարյա բոլոր շրջանները (բացառությամբ 5 շրջանի)։

Հայկոոպը ձեռք է բերել, վորպես սեփականություն 11 կինո-նկարներ և պրակատով վերցնում է ամսեկան 14 նկար։

2. Կինո-ռադիոֆիկացիայի ասպարիզում մեր ունեցած առաջին հաջողությունները ցույց են տալիս, վոր 1) միանգամայն ճիշտ են յեղել

Ցենտրոսոյուզի և Հայկոոպի վարչությունների վորոշումներն այն մասին, վոր Սպառողական կոոպերացիան այս ասպարեզում պետք է այնքան լայնացնի իր աշխատանքները, վոր դառնա գյուղը կինո-ռադիոֆիկացիայի յենթարկող հիմնական կազմակերպությունը, 2) մյուս կողմից այս հաջողությունները վկայում են մեր կինո-ռադիո ընկերությունների կազմակերպման նպատակահարմար և կենսունակ լինելը և 3) ցույց են տալիս, վոր սպառկոոպերացիան ունի լայն հնարավորություններ Կինո-Ռադիոֆիկացիայի ասպարեզում ավելի ևս ծավալելու իր աշխատանքը:

3. Մեր աշխատանքները ունեցել են հետևյալ հիմնական թերությունները՝ 1) բավարար չափով չի ծավալվել ռադիո-ֆիկացիայի աշխատանքը: 2) Կինո սեանսների ցուցադրումները դեռ ևս վորակապես չափազանց թույլ են: 3) Կինո նկարները շատ անգամ յեղել են անհամապատասխան և վորակով վատ, 4) Կինո մեխանիկների կադրը թույլ է, 5) գյուղում չի ծավալվել լայն բացատրական, քաղաքական աշխատանք կինո-ռադիո ֆիկացիայի շուրջը, այսպիսին ավելի մասսայականացնելու և մյուս կողմից մեր աշխատանքների համար ավելի նպատակահարմար ձևով օգտագործելու նպատակով: 6) Մի շարք սպառկոպներ դեռևս ցույց չեն տալիս բավարար մասնակցություն կինո-ռադիոյի աշխատանքներին, չմուծելով իրենց հասանելիք գումարները և այլն, վորով դժվարացնում են կինո-ռադիո ընկերությունների ֆինանսական դրությունը: 7) Հատուկ ծրագրով չեն սպասարկվել կոլլեկտիվ և խորհրդային տնտեսությունները (սպասարկվել են ընդհանուր կարգով): 8) Չեն կազմակերպված ռադիո-պարագաների վաճառման կետեր ռադիո պարագաններ չստանալու պատճառով:

4. Գյուղատնտեսության սոցիալիստական վերակառուցման աշխատանքների ներկա շրջանը պահանջում է վերակառուցել ընդհանրապես մեր ամբողջ կուլտ-աշխատանքը և մասնավորապես կինո-ռադիոֆիկացիայի գործը և տանել այսպիսին կոլլեկտիվ և խորհրդային տնտեսությունների սպասարկման հիմնական լոզունգի տակ, վորը իրագործելու համար պետք է կատարել հետևյալը:

## Կինո-ֆիկացիայի ասպարեզում

1) Մինչև 1930 թ. Հոկտեմբերի մեկը Կինո-Ռադիո ընկերությունների թիվը հասցնել 30-ի, ունենալով 50 շրջիկ կինո ապարատներ:
2) Գտնել ճիշտ՝ Բաղլուսվարների յեվ մյուս կազմակերպությունների շրջիկ կինոները սպառկոպների Կինո-ռադիո ընկերություններին հանձնելը, վորը հնարավորություն է տալիս այս աշխատանքը տանել ավելի կազմակերպված և կենտրոնացված ձևով:

Շրջիկ կինոներն ավելի նպատակահարմար օգտագործելու համար գիծ վերցնել ամրացնելու այդպիսիները ըստ առանձին շրջանների, նպատակ ունենալով մինչև 1930 թ. հոկտեմբերի 1-ը ամեն մի շրջանին տալ մեկ շրջիկ կինո ապարատ, իսկ համատարած կոլլեկտիվացման շրջաններին յերկուական շրջիկ կինո։ (40 շրջանին տալ 50 շրջիկ)։

3. Կազմակերպել կինո մեխանիկների վերապատրաստման մեկ ամսվա կուրսեր։

4. Մինչև հոկտեմբերի 1-ը գնել ևս 5 սեփական կինո նկարներ, որից 2-ը կուլտուրական ֆիլմաներ, ձեռք բերել նաև 5 հատ ագիտ-ֆիլմեր 1-2 մասերով։

5. Մինչև 1930 թ. հոկտեմբերի 1-ը 3 շրջկենտրոններում (համատարած կոլեկտիվիզացիայի յենթարկված) և սովխոզում ունենալ ստացիոնար կինոներ ընդամենը 5 հատ։

6. Շրջիկ կինոների աշխատանքի վորակը բարձրացնելու համար տեղերում առաջ բերել մասսայական քննադատություն և լայն հասարակական կարծիք կինոյի աշխատանքների շուրջը, բացատրել և կազմակերպել զրույցներ կինո նկարների բովանդակության մասին, ուժեղացնել կարգապահությունը կինո սեանսների ցուցադրման ժամանակ, կարգավորել շենքը, նախորոք հայտարարել կինոյի մասին և այլն։

7) Կինո-ռադիո ընկերությունների ֆինանսական դրությունը ուժեղացնելու համար միջոցներ ձեռք առնել վորպեսզի բոլոր սպառկոոպները մուծեն իրենց վերցրած կինո սեանսների արժեքը, տեղերում հետևեն կինո-սեանսների մուտքերին և այլն։ Անհրաժեշտ է հատկապես պայքար մղել դեռևս գոյություն ունեցող սոքեսական տրամադրությունների դեմ, յերբ այս կամ այն սպառկոոպը կինոյի վրա ծախսել է իր կուլտ ֆոնդի 60-70 տոկոսը, վոչ մի կոպեկ մուտք չի ունենում։ Գտնելով տոմսերի գները նորմալ (5-15 կոպ.) անհրաժեշտ է, վորպեսզի բոլոր սպառկոոպները լայն կերպով օգտագործեն այս հնարավորությունը և ունենան մուտքեր կուլտ-ֆոնդի միջոցներով ուրիշ կուլտ աշխատանքներ տանելու համար։

8. Շրջիկ կինոների ամսական մարշրուտները կազմել քաղլուսկոմների նախագահների և կոլլեկտիվ տնտեսությունների վարչնախագահների հետ նպատակ ունենալով նրանց նույնպես անմիջական մասնակից անել կինոյի աշխատանքներին։

9. Յերևանում բաց անել կինո պարագաների և ապարատների վերանորոգման արհեստանոց։

10. Լրիվ չափով կիրառել Վրաստանի և Ադրբեջանի սպառկոոպերացիայի կինո մեխանիկների հետ կնքած սոց-մրցման պայմանագրերը։

11. Հրատարակել կինո գրականություն։

## 2. Ռադիո-ֆիկացիայի ասպարեզում

1. Մինչև 1930 թ. Հոկտեմբերի 1-ը Սպառկոոպերացիայի միջոցներով կոլեկտիվ և խորհրդային տնտեսություններում կառուցել 50 ռադիո ընդունիչներ և անցկացնել 1500 լարային ռադիո ընդունիչներ։ (Վերջինս այն շրջաններում, վորտեղ անց է կացվում լարային գիծ)։

2. Հաշվի առնել ներկայումս սպառկոոպերացիայի միջոցներով ձեռք բերած ռադիո ընդունիչները, վորոնք չեն գործում զանազան պատճառներով (գլխավորապես ռադիո մասեր և պարագաներ չունենալու պատճառով) և վերանորոգել ու աշխատեցնել այդպիսիները։ Այդ նպատակով Հայկոոպի կուլտ բաժնում ունենալ ռադիո հրահանգիչ, վորը սիստեմատիկ կերպով սպասարկի սպառկոոպներին մինչև այժմ ունեցած և նոր կառուցվող ռադիո ընդունիչները։

3. Ռադիո պարագաները տեղերին մոտեցնելու համար 10 կետերում կազմակերպել ռադիո պարագաների վաճառքի կետեր և միջոցներ ձեռք առնել ստանալու այդպիսիները Ցենտրոսոյուզի միջոցով։

4. Յերևանի ռադիո կենտրոնի միջոցով կազմակերպել ռադիո հաղորդումներ կոոպերատիվ խնդիրների շուրջը վոչ պակաս ամսական յերկու անգամ։

Հաղորդումների մասին նախորոք հայտնել ցանցին հաղորդելիք նյութի մասին։

## ՍՊԱՌԿՈՈՊԵՐԱՑԻԱՅԻ ԿԵՆՑԱՂԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ

1 Ժողովրդական տնտեսության վերակառուցման և համատարած կոլեկտիվացման շրջանի սպառկոոպերացիան նոր կենցաղի ասպարեզում ունի բավական անելիքներ և նրա կուլտ աշխատանքների ամենակարևորն է։

2. Սպառկոոպերացիայի կենցաղային աշխատանքների առանցքը կազմել են մանկապարտեզներ, մանկահրապարակներ, մոր և մանկան անկյուններ, կուլտ թեյարաններ և մսուրներ, վորոնց ասպարեզում սպառկոոպերացիան վերջին տարվա ընթացքում ունեցել է բավականին հաջողություններ։

| ՀԻՄՆԱՐԿՆԵՐԻ ԱՆՈՒՆՆԵՐԸ | 1928/29 տ. տար. | | 1929/30 տ. տար. | |
|---|---|---|---|---|
| | Ձեռնարկ | Կոմպլեկտ | Ձեռնարկ | Կոմպլեկտ |
| 1 Մանկապարտեզներ | 21 | 28 | 43 | 57 |
| 2 Մանկահրապարակներ | 38 | 49 | 49 | 64 |
| 3 «Մոր և մանկան» անկյուններ | 29 | — | 51 | — |
| 4 Մսուրներ սեզոնային | 2 | — | 3 | — |

3. Ներկա մեր պայմաններում կենցաղային ձեռնարկների քանակի հետ միասին ամենակարևոր տեղն է բռնում որակը, որովհետև մեր մանկապարտեզները-հրապարակները համապատասխանեն մեր նոր կենցաղի, կոլլեկտիվ աշխատանքին, որի իրագործմանը պետք է մասնակից անել բանվորուհիների և գեղջկուհիների լայն մասսաները։

4. Սպառկոոպները կազմակերպելով մանկական հրապարակներ, բավականին չեն զբաղվել նրա ներքին խնդիրներով։ Կան մանկապարտեզներ, որոնք յերկրորդ տարին է ինչ գոյություն ունեն գտնվում են հակասանիտարական անհարմար շենքերում, բավականաչափ կահավորված չեն, յերեխաները զուրկ են բժշկական օգնությունից, յերեխաներին նախաճաշ չի տրվում, նախահաշվով նախատեսնված գումարները իրենց նպատակին չեն ծառայում և այլն։

5. Շատ տեղերում ծնողական խորհուրդ չի կազմակերպված, որը կանանց ինքնագործունեության միջոցներից մեկն է, որտեղ մայրերը ծանոթանում են մանկապարտեզային աշխատանքների հետ և անմիջապես իրենք մասնակից են դառնում այդ աշխատանքներին։

6. Մոր և մանկան անկյունները նույնպես շատ տեղեր անուշադրության են մատնված, յերեխաների համար տրված ուժիտը վաճառվում է կամ ուժիտի փոխարեն տրվում է նպաստ, կամ զգացվում է ուժիտի խիստ պակաս որը պետք է անթույլատրելի համարել։

7. Մի շարք սպառկոոպներ այդ աշխատանքների վրա հարկ յեղած ուշադրությունը չեն դարձրել և բավականացել են միմյան նրա ձևական կողմով։

Ներկայումս կոլխոզներում նոր դաստիարակչության արմատներն են բուն դնում, հարկավոր է յերեխաների աշխատանքը այնպիսի հիմքերի վրա դնել, այնպես կազմակերպել, վորով յերեխան սովորի կոլլեկտիվ աշխատանքի և կոլլեկտիվ տնտեսության, այլ վոչ այն աշխատանքին, վորը նրա ուժից վեր է և իր նպատակին չի ծառայում, վորի իրագործման համար հարկավոր է.

1. Ներկայումս մեր առաջ դրված է այն յերեխաների հարցը, վորոնց մայրերը աշխատում են արտադրության մեջ, սպառկոոպերացիայում, վորոնք զուրկ են դաստիարակչությունից, հարկավոր է մեր նոր բացվելիք մանկապարտեզներում, հրապարակներում և մսուրներում առաջին հերթին տեղավորել նմաններին։

2. Ներկայումս սպառկոոպերացիայի առաջ դրված է հարվածային և վճռողական այն հարցը, վոր վոչ թե բարելավել մեր կենցաղը, այլ ստեղծել նորը, վորի համար հարկավոր է տեղերում ունենալ հատուկ ֆոնդ, աշխատանքները տանել ծրագրված և նախահաշվով, և հետևել, վորպեսզի այդ

նպատակին հասկացրված գումարներն իրենց նպատակին ոգտագործվեն։

3. Ներկա մեր պայմաններում, սպառկոոպերացիայի առաջ ավելի քան պարտականություն ե տրվում համատարած կոլլեկտիվացման շրջանում ավելացնել մանկահրապարակների, մանկապարտեզների և սեզոնային մըսուրների թիվը, վորոնց միջոցով հնարավոր կլինի գեղջկուհիներին վոչ միայն կապել մեր ընդհանուր աշխատանքների հետ, այլ և բարձրացնել նրա կուլտուրական մակարդակը, կապելով հասարակական աշխատանքներին։

Հետագայում աստիճանաբար յեղած ցանցը վերակազմակերպել կոլխոզային կենտրոններում։

4. «Մոր և մանկան» անկյունները, նամանավանդ վերջին շրջանում բավականին նվաճումներ ունեն, բավականին տեղ են գրավում բանվորուհիների և գեղջկուհիների լայն մասսաների մեջ. բայց մինչև այժմս մեր մի շարք կոոպվարչությունների կողմից այդ աշխատանքները թերագնահատվել են, կամ յերկրորդական տեղն ե բռնել և իրենց աշխատանքները այդ ասպարեզում ծավալել են առևտրական տեսակետից, ժամանակն ե վերջ տալ նման տրամադրություններին, «Մոր և մանկան» անկյունները ծառայեցնել իրանց նպատակներին և ապահովել յերեխաներին համապատասխան ոժիտով և հագուստով։

5. Մսուրները նոր կենցաղի հիմնաքարը լինելով, ավելի քան պակաս պարտականություն չի տրվում սպառկոոպերացիայի առաջ, լայնացնել այդ աշխատանքները, զարկ տալ նոր բացվելիք մսուրներին, հարմարեցնել նրանց բանվորուհիների, գեղջկուհիների աշխատանքի ժամերի և որերի հետ։

6. Կուլտուրական թեյարանները մեր այն ձեռնարկներն են, վոր մի կողմից դուրս ե վանում շուկայից մասնավորներին՝ ինքը տեղը գրավելով, 2-րդը, մեր աշխատավորական և գյուղացիական մասսաների հանգստյան վայրն ե, վորի վրա մեր վարչությունները տեղերում շատ քիչ ուշադրություն են դարձնում հարկավոր ե լուրջ ուշադրություն դարձնել կուլտուրական թեյարանների աշխատանքների վրա, ապահովելով համապատասխան գրականությամբ և այլն։

7. Կենցաղային աշխատանքներն իրենց բարձրության վրա դնելու համար, անհրաժեշտ ե կապ պաշտպանել պրոֆեսիոնալ հասարակական կազմակերպությունների, Առժողկոմատի, մոր և մանկան բաժինների հետ և ստեղծել նորը-սոցիալիստականը։

## ՍՊԱՌՈՂԱԿԱՆ ԿՈՈՊԵՐԱՑԻԱՅԻ ԿՈՒԼՏ-ԿԵՆՑԱՂԱՅԻՆ ՁԵՌՆԱՐԿՈՒՄՆԵՐԸ ԿՈԼԵԿՏԻՎ ՅԵՎ ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ

Սպառողական կոոպերացիան այն հիմնական կազմակերպություններից մեկն ե վորը պետք ե կազմակերպի և տանի կուլտ-կենցաղային աշխատանքները կոլեկտիվ և խորհրդային տնտեսություններում։

Այս աշխատանքը հատուկ ծրագրով սկսված է գարնանացանի կամպանիայի ընթացքում, վորը պետք է շարունակվի ծավալվել հետագայում։

Կոլեկտիվ և խորհրդային տնտեսություններում սպառողական կոոպերացիան պետք է կազմակերպի հետևյալ կուլտ-կենցաղային ձեռնարկումները։

1. Կոլեկտիվիզացիայի յենթարկվող 150 վայրերում, (գյուղերում, շրջ. կենտրոններում) կազմակերպել մասսայական քաղաքական, գյուղատնտեսական և կոոպերատիվ գրականության վաճառքի ու տարածման գրադարակներ ու գրաբաժիններ (վերջիններս 10 կետերում, հատուկ աշխատակիցներով)։

2. Սպառկոոպերացիայի ցանցի այժմյան ունեցած և առաջիկայում ձեռք բերվելիք շրջիկ կինոներից 35-ը համատարած կոլեկտիվացման յենթարկվող շրջաններին։

3. Համատարած կոլեկտիվացման յենթարկվող 56 գյուղերում կառուցել ռադիո ընդունիչներ։

4. Գլխքաղլուսվարի և կոլխոզկենտրոնի հետ միասին կազմակերպել 20 ագրոգիտական դպրոցներ մեկ ամիս տևողությամբ ընդգրկելով 750 հոգի կոլխոզնիկներ։

5. Կոլեկտիվ և խորհրդային տնտեսությունների համար կազմակերպել 100 անգրագիտության վերացման դպրոցներ (վորից մեծ մասն այժմ աշխատում են)։

6. Գարնանացանի կամպանիայի առթիվ հրատարակել յերկու անուն գիրք, 2—3 մամուլ ծավալով և 3 անուն մեկ կոպեկանոց գյուղատնտեսական և գեղարվեստական գրքեր։

7. Մեր բանվորական և քաղաքային կոոպերատիվներից 7-ն ամրացնել մեկական խորհրդային տնտեսություն, վորտեղ այդ կոոպերատիվները պետք է բաց անեն մանկապարտեզներ (Յերևանի, Լենինականի, Ալլահվերդու, Ղափանի բանկոոպները և Ղարաքիլիսայի, Ն. Բայազետի և Էջմիածնի սպառկոոպները)։

8. Հայկոոպի և սպառկոոպների միջոցով կոլեկտիվ տնտեսությունների համար կազմակերպել 20 մանկապարտեզային խմբակներ և 30 մանկա-հրապարակներ (մանկապարտեզների մեծ մասն այժմ բացված են)։

9. Ցենտրոսոյուզից, Սովկինոյից և Վրաստանի Կինոպրոմից ձեռք բերել 5 հատ ագիտ-կուլտուրական նկարներ կոլեկտիվիզացիայի և գյուղատնտեսական խնդիրներին նվիրված, ինչպես և վերցնել Հայկինոյին բաց թողած նման նկարներ՝ գարնանացանի կամպանիայի ընթացքում ցուցադրելու համար։

10. Սպառկոոպների մեջ ծավալել սոցիալիստական մրցակցությունը վե-

րոհիշյալ կուլտ-կենցաղային ձեռնարկումների շուրջը և մրցանակ տալ այն սպառկոոպին, վորն ավելի լավ կկազմակերպի կոլխոզների և խորհրդային տնտեսությունների կուլտուրական սպասարկման գործը։

11. Կոլխոզկենտրոնի հետ միասին վորոշել թե վոր կոլեկտիվ տնտեսության կից վերոհիշյալ ձեռնարկումներից վորը պետք է կազմակերպի և անցնի գործնական աշխատանքի։

12. Սպառողական կոոպերացիան վերոհիշյալ կուլտ կենցաղային ձեռնարկումները պետք է կազմակերպի ինքնուրույն կերպով, համապատասխան որգանների հետ համաձայնեցնելով աշխատանքի ծրագիրը, նախահաշիվները և իր ձեռնարկումների կատարման շուրջը ներգրավի այլ կազմակերպությունների միջոցներն ու կոոպերատիվի լայն ակտիվին։

13. Հանձնարարել կոոպ. վարչություններին, հիմք ընդունելով վերոհիշյալ ծրագիրը, կազմել իրենց կատարելիք կուլտ աշխատանքի կոնկրետ ծրագիր, համաձայնեցնելով տեղական որգանների հետ։

## ԳՐՔԻ ՏԱՐԱԾՄԱՆ ԳՈՐԾԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՍՊԱՌԿՈՈՊԵՐԱՑԻԱՅՈՒՄ ՅԵՎ ՆՐԱ ՀԵՏԱԳԱ ԱՆԵԼԻՔՆԵՐԸ

Սպառկոոպերացիան Խորհրդային Հայաստանում անցել է գրքի տարածման գործին 1928 թվի սկզբներից։ Նախնական շրջանում կազմակերպվել էր հատուկ սեկցիա, այդ աշխատանքները կազմակերպելու, վորը կարճ ժամանակից հետո կազմալուծվեց և այդ աշխատանքները բաժանվեցին յերկու մասի՝ առևտրական մասը հանձնարարվեց Հայկոոպի Առբաժնին, իսկ կազմակերպչական մասը—կազմ-բաժնին։

### 1. Կազմակերպչական

1. Կենտրոնում կազմակերպված է գրապահեստ, վորի միջոցով ցանցը պետք է սպասարկվեր նկարներով և կոմիսիոն գրականությամբ, իսկ մյուս գրականության ամբողջ մասը պետք է ուղարկվեր հրատարակչությունների պահեստներից անմիջապես ցանցին (տրանզիտով)։

2. Հայկոոպի կենտրոնական պահեստում լայնացվեց գրենական պիտույքների ասորտիմենտը։

3. Կազմվեց հատուկ ցուցակ, վորով նախատեսնվում էր գրատարածման կետերի կազմակերպումը սպառկոոպ ցանցում։

4. Այս առթիվ շրջաբերական նամակի միջոցով ցանցին տեղեկացրրվեց, վոր վերջինները պետք է ունենան գրատարածման կետեր ու գրքի տարածման մեթոդներ ու բաց թողնվելիք գրականության պայմանները, վորից հետո ուղարկվեց գրականությունը նշված կետերին։

## 2. Գրավաճառային ցանցը

*Այն բեկումը, վորը տեղի ուներ կենտրոնում, բացակայում եր ցանցում, այդ իսկ պատճառով չստացվեց այն քաղաքակ. եֆեկտն ինչ վոր սպասվում եր։ Սակայն պլանի կատարումը ցանցի կազմակերպման ասպարեզում ունեցավ հաջողություն, վորը յերևում ե ներքևում բերված աղյուսակից։*

| ԳՐԱՏԱՐԱԾՄԱՆ ԿԵՏԵՐ | Նախատեսնված ե առ 1-ն հոկտ. 1929 թ. | Կազմակերպված ե առ 1-ն հոկտեմբ. 1929 թ. | Կատարման տոկոսները |
|---|---|---|---|
| 1. Գրապահեստ . . . . | 1 | 1 | 100 տոկ. |
| 2. Գրախանութներ և բաժիններ . | 8 | 10 | 120 » |
| 3. Գրադարակներ . . . | 42 | 70 | 166 » |
| 4. Շրջիկ գրավաճառներ . . | 6 | 10 | 120 » |
| Ընդամենը . . . | 57 | 91 | 128,5 տոկ. |

*Քննելով գոյություն ունեցող գրատարածման ցանցն ըստ շրջանների պետք ե ասել, վոր ցանցն անհավասար աճել ե գավառներում։*

*1. Յերևանի գավառ—33 կետ, 2. Լենինականի գավառ—25 կետ, 3. Լոռի-Փամբակի գավառ—13 կետ, 4. Զանգեզուրի գավառ—4 կետ և 5. Սևանի գավառ—17 կետ. ավելի տարածված ցանց ունեն Լենինականի և Յերևանի գավառները։ Հարկավոր չափով պետք ե լայնացնել Զանգեզուրի և Լոռի-Փամբակի գավառներում գրատարածման ցանցը։ Թեկուզ Լենինականի գավառը կետերի թվով մեծ տեղ ե գրավում, բայց կազմակերպչորեն և շրջանառության տեսակետից նա հետ ե մնում, ավելի թույլ ե գնում աշխատանքն ազգային փոքրամասնությունների շրջանում։ Գրատարածման գործում առողջ ցուցանիշը պետք ե համարել գրախանութներն ու գրաբաժինները հատուկ աշխատակիցներով, իսկ գրադարակները կայուն չեն, մանավանդ յերբ միության կողմից տարվելիք հրահանգչական աշխատանքները թույլ են։*

*Ի նկատի ունենալով, վոր գրախանութները դրական դեր են խաղում այս գործում, անհրաժեշտ ե հատուկ ուշադրություն դարձնել Ցենտրոսոյուզի պլենումի այն վորոշման՝ վորտեղ ասված ե՝ շրջանային կենտրոններում 74 տոկոսով և յենթաշրջաններում 60 տոկոսով կազմակերպել գրախանութներ կամ բաժիններ հատուկ աշխատակիցներով։*

## 3. Բանվորական կոոպերացիան յեվ գրքի տարածումը

Բանվորական կոոպերացիան բանվորներին գրականություն մատակարարելու գործը թողել է յերեսի վրա։ Վարկավորումը գրականությամբ և գրադարակների բացումը գործարաններին կից և բանվորական ավաններում, բանկոոպների կողմից չի ձեռնարկվել (բացառությամբ «Գորնյակ» կոոպից, վոր ունի խղճուկ կրպակ)։ Կուլտ-կենցաղային աշխատանքների ծավալումը փայատերերի մեջ պահանջում են բանվորական կոոպերատիվ խանութներից դուրս հանել գինին և ողին ու այն փոխարինել գրականությամբ և այլ կուլտուրական ապրանքներով։

## 4. Գրավաճառների կադրերը

Գրավաճառքի գործի բարդությունը նրանից է, վոր վերջինիս ասսորտիմենտը կազմում է անհամեմատ շատ անուն գրքեր։ Ուստի և աշխատակիցների գործի անտեղյակ լինելն անբավարար է դարձնում այն բեկումը, վորը նկատվում է մեզ մոտ։ Կազմակերպչական աշխատանքները թերագնահատելուց, համապատասխան ասսորտիմենտ չունենալուց, առանց պարբերական լրացումների նոր գրականությամբ և գործի անկանոն դրվածքի հետևանքով, կարող է կուտակում առաջ գալ առանձին կետերում։ Այս բոլորը կհանգեն նրան, վոր այդ ասպարեզում կվարկաբեկվի գրքի տարածման գործն ու այն խոշոր նշանակություն ունեցող խնդիրը, վորը դրված է սպառկոոպերացիայի վրա. այն է—գիրքը մոտեցնել բանվորա-գյուղացիական լայն մասսաներին՝ կմնա անկատար։

Գրատարածման գործում յեղած յուրահատկությունները պահանջում են լուրջ ուշադրություն դարձնել գրավաճառների կադրերի վրա, բացելով հատուկ դասընթացքներ։ Հրահանգչական պարբերաբար օգնություն ցանցին, վորը վերջին ժամանակներս բացակայում է։ Աղերիտտիֆակը նախատեսել է այս տարի յերկու դասընթացքներ ցանցի համար գրավաճառներ պատրաստելու, վորից մեկն արդեն վերջացել է, ու մյուսը կսկսվի մոտ ժամանակներս, հրահանգիչների թիվը յերեք է ու մոտ ժամանակներս պետք է այն հասցնվի հինգի, Այս ուղղությամբ Հայկոոպը նույնպես քայլեր է անում ու նախատեսնում է յերրորդ կիսամյակում ունենալ դասընթացքներ՝ 25 լսողներով։

## 5. Գրականության ասսորտիմենտը յեվ նրան սպասարկումը

Սպասարկման վորակը գրավաճառքային ցանցին գրականությամբ և գրականության ընտրությունը շրջանի սպառողի պահանջների համապա-

տասխան հանդիսանում է ամենահյականը, գրատարածման գործի հաջողության տեսակետից։ Պահանջների ժամանակին և լրիվ բավարարումը դեռ չի կատարվում։ Թեկուզ կենտրոնը մտածում է գրավաճառքային կետերի ասսորտիմենտը լրացնել նոր լույս տեսնող գրականությամբ, բայց ցանցն ամեն կերպ աշխատում է խուսափել նրանից։ Հայպետհրատը միայն վերջերս է սկսել հրատարակել մասսայական գրականություն գյուղ. ընթերցողի համար, վորի կարիքն իրոք զգացվում է մեր գյուղում և ունի լայն պահանջ, բայց Հայպետհրատն այնպիսի չնչին տիրաժով է հրատարակել այն, վորն ստիպված է յեղել մեր պահանջի 40 տոկոսը կրճատել, մինչև այժմ չունենք մանկական պատկերազարդ 10—15 կոպ. գրքույկներ, չունենք հակակրոնական գրականություն և ռազմական պոպուլյար գրականություն, վորի պահանջը մեր գյուղում զգացվում է։ Մինչև հիմա Հայպետհրատի կողմից չի ձեռնարկված հայ գործիչների նկարների հրատարակչությունը և յեթե յեղել են փորձեր, յեղել են շատ անհաջող։ Վերջին ժամանակներս միջոցներ են ձեռք առնված վորպեսզի Ռ. Ն. ասսոցիացիան (ԱԽՐ) հրատարակի 10 կոպ. նկարներ այդ գործիչների և այլն, իսկ գրականության մասին պետք է մտածի Հայգիրքը։

## 6. Գրախանութների ապրանքների պաշարը յեվ հաշվառումը

Սպառկոոպներն իրենց գրավաճառքային կետերում պետք է ունենան պահանջվելիք չափով գրականության պաշար, հասցնելով այդ գրականությունը հատուկ շրջանառության (3—4 անգամ տարեկան)։ Հիմնական գրքի գործում դա վաճառքի հաշվառումն է, վորից խուսափում են մեր բոլոր կետերը բացառությամբ Ցելենովկայի կոոպից։

## 7. Գյուղսպառկոոպերացիան յեվ գրքի տարածման գործը

Յեղած տվյալները գալիս են ասելու, վոր սպառկոոպներից վոմանք մոտենում են գրատարածման գործին նեղ առևտրական տեսակետից, շատերը թերագնահատելով այդ աշխատանքը, ամեն ջանք գործ են գնում վերջինից ազատվելու համար։ Մեր կողմից հաշվի առնված կետերը ցույց են տալիս հետևյալ թվերը։

(Աղյուսակ հաջորդ յերեսում)

Շրջանառություն գրավաճառքային կետերի 1-ին յեռամս. 1929—30 թ.

| ԿՈՈՊԻ ԱՆՈՒՆԸ | Քանի կետ ունի | Շրջանառություն 1 յեռամսյակում | Մեկ ամսվա միջին շրջանառութ. |
|---|---|---|---|
| 1. Ցելենովկայի . . | 1 խանութ | 4600 | 1533 |
| 2. Ն. Ախտա . . . | 1 » | 3870 | 1230 |
| 3. Ալլահվերդի . . | 1 » | 7156 | 2225 |
| 4. Դյուղքյանդ . . | 1 » | 2050 | 684 |
| 5. Ղուրդուղուլի. . . | 1 » | 3000 | 1000 |
| 6. Համամլուի . . . | 1 » | 4500 | 1500 |
| 7. Ղամարլու . . . | 2 գրաղ. | 1300 | 433 |
| 8. Ոնղամալ . . . | 3 » | 480 | 160 |
| 9. Դավալու. . . . | 1 » | 120 | 120 |
| Ընդամենը . . | 12 | 27,075 | 9,025 |

Սրանից գրականությունը կազմում է 50 տոկոս և գրենական պիտույքներ ու այլ կուլտուրական ապրանքներ—50 տոկոս։

Սպառկոոպերացիան հրապարակ է յեկել մեն մենակ։ Գյուղ-ակտիվը և հասարակական կազմակերպությունները շատ թույլ աջակցություն են ցույց տալիս և այն շրջանառությունը, վորը կատարվել է, այդ կատարվել է խանութի ներսը, գրականությունը խանութից դուրս չի գնացել։ Այս աշխատանքները հաջող տանելու համար տեղերը պետք է լուրջ ուշադրություն դարձնեն։

## 8. Շրջիկ գրավաճառներ

Այն չնչին փորձը, վորը մենք ունենք այս ասպարեզում գալիս է ասելու, վոր այս ձևը հիմնականներից մեկն է գիրքը լայն մասսաներին մոտեցնելու գործում։ Ղամարլվի յերկու շրջիկը մեզ ավելի մեծ շրջանառություն են տվել քան թե Ղուրդուղուլիի գրախանութն իր 3 դարակներով կամ դարակը։ Ճիշտ է սկզբնական շրջանում այդ Ղամարլվի կոոպի համար յեղել է դեֆիցիտային, բայց ապագայում այն ծածկել է իրեն վնասը։ Ուս-

տի և մենք ամեն ջանք պետք է գործ դնենք կազմակերպելու ամեն մեկ դրավաճառային կետին կից շրջիկների կայուն-կադր, վորոնք մեզ այս աշխատանքի ընթացքում կարող են մեծ ծառայություն մատուցանել։

## 9. Փոխհարաբերությունը հրատարակչությունների մեջ

*Պայմանագրերի կնքումն և ցանցի կազմակերպումն ունեցել են իրենց դրական հետևանքը այն, վոր գնողունակությունը բարձրացրել է, վորը յերևում է ներքևում բերված թվերից։*

| ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ | Գնված է 28-29 թ. | Գնվում է 29-30 թ. | Տոկոսային բարձրացում |
|---|---|---|---|
| | Ամեն անուն գրքից | Ամեն անուն գրքից | |
| Հայգրքից . . . | 5-ական օրին. | 25-ական օրինակ | 400 տոկոս |
| Զակկնիգայից . . | 10-ական » | 30-ական » | 200 » |
| Ցենտրոսայուզից . | 50-ական » | 300-ական » | 900 » |
| Ազերիտտիֆակից . | 2-ական » | 50-ական » | 250 » |

*Դեռևս մի կարևոր խնդիր, վորը չի հարթված հայգրքի հետ, այդ նրա առևտրական կետերի հանձնումն է։ Մեր կողմից մի շարք անգամ յեղել են առաջարկություններ, գավառային կենտրոններից ցածր կետերում յեղած խանութները հանձնել սպառկոոպ. ցանցին, նրանք ամեն կերպ խուսափել են դրանից և խուսափում են այժմ։*

## Եզրափակում

*Մեր կողմից նկարագրված գրքի վաճառքի դրությունը սպառկոոպերացիայում հաստատում է նրա լուրջ հառաջադիմությունը վերջին յեռամսյակում։*

*Առաջիկա շրջանում անհրաժեշտ է հատուկ ուշադրություն դարձնել նրա կազմակերպչական ու սպասարկման գործի վրա, վորը պետք է դառնա վոչ թե նրա լայնացման, այլ նաև վորակի բարձրացման։*

## Հայկոոպի հրատարակչական աշխատանքները յեվ նրա հետագա անելիքները

*Հայկոոպը կոոպ. գրականության հրատարակման է անցնում խորհրդայնացումից անմիջապես հետո, բայց նա ձևավորվում ու փոքր չափով շուկա յե հանում իր հրատարակությունները 1923 թ., այս անգամ նա առ-*

լիս է Զայանովի ձեռնարկը, հետագայում տալիս է Պիճիկյանի գիրքը՝ «Հայաստանի սպառկոոպերացիայի պատմությունը, Սամբուլցյանի Հայաստանի սպառկոոպերացիան և նրա խնդիրները», վորոնք կարճ ժամանակամիջոցում սպառվում են։ 1928-29 թ. հրատարակվում է մի ամբողջ սերյա պապուլյար բրոշյուրներ, «Գյուղկոոպ. գրադարան» մի քանի կտոր «Բանվորի գրադարանից» «Աշխատավորուհու գրադարան» և այլն. Նաև հրատարակվում է մի կարևոր ձեռնարկ «Հայաստանի սպառկոոպերացիան թվերով» վորի տեքստը գրված է 2 լեզվով՝ հայերեն և ռուսերեն։

## Հրատարակչություններ ըստ թվերի

Ինչպես յերևում է այլուսակում բերված թվերից, քանի գնացել այնքան աճել է հրատարակչական միջոցները, վորի հետևանքով նաև հաջողվել է ավելի շատ անուն գրքեր հրատարակել։ Հրատարակության հիմնական թերությունը յեղել է այն, վոր հրատարակվող գրքերի տիրաժը վորոշվել է առանց հաշվի առնելու շուկայի պահանջը, վորի հետևանքով դեռ կան գրքեր, վորոնք մնացել են Հայկոոպի գրապահեստի դարակներում, մասամբ էլ դուրս են գրված իբրև մակուլատուրա. յերկրորդ թերությունը կայանում է նրանում, վոր հրատարակչությունը շատ քիչ բան է հրատարակել գրված գեղարվեստական ձևավորումով, յերկու կոոպերատիվ պիես է տվել հայ աշխատավորությանը և վոչ մի ագիտ-դատ։ Հրատարակչությունը հետագայում պետք է աշխատի իր կողմից հրատարակվող գրականության մեջ վորոշ տեղ տա, գեղարվեստական գրականության, վորին նա արդեն ձեռնամուխ է յեղել։

Սպառողական ցանցը չունի վոչ մի ձեռնարկ և վոչ մի կատեգորիայի աշխատակցի համար։

Անհրաժեշտ պետք է համարել շտապ կերպով հրատարակելու հետևյալ ձեռնարկները՝ հաշվապահական, կոոպ-խմբակների, կոոպգրագիտության (դասագիրք դպրոցների համար) վորի կարիքը շատ մեծ է ու այս տարի մենք ստիպված ենք յեղել օգտագործել շուկայում յեղած Լինավարյովի կոոպ. այբուբենը։

Այս հանգամանքի վրա հրատարակչությունը լուրջ ուշադրություն պետք է դարձնի։

## Կուլտ մասսայական աշխատանքը տեղերում յեվ սպառկոոպե-րացիայի տեղական կուլտ օրգանները

Ա. Մասսայական կուլտ աշխատանքը ձեռնարկություններում և գյուղում մեր կարևոր անելիքներից մեկն է։ Նրա մեջ մտնում են՝

1. Անգրագիտության վերացման աշխատանքը։
2. Կոոպ անկյունների կազմակերպումը տեղերում։
3. Հարց ու պատասխանի յերեկոների կազմակերպումը կոոպերատիվ և այլ խնդիրների շուրջը։
3. Կուլտ աշխատանքը կանանց և յերիտասարդության մեջ։
5. Կոոպխմբակների կազմակերպումը և կոոպերատիվ խնդիրների լուսաբանումը այլ միջոցներով.
6. Հակակրոնական աշխատանք։
7. Հակաալկոհոլային աշխատանք։
8. Եքսկուրսիաների կազմակերպումը։
9. Թերթերի ու ժուռնալների տարածումը գյուղում։
10. Կոոպերատիվ քաղաքական կամպանիաների անցկացումները։
11. Ընդհանուր կոոպերատիվ քաղաքական աշխատանք կոոպերացիայի անդամների շրջանում։
12. Կուլտ կենցաղային աշխատանքը քոչվորների մեջ։
13. Աշխատանքը պիոներական կազմակերպության մեջ։
14. Կուլտ կենցաղային աշխատանքը ազգային փոքրամասնություն-ների մեջ։

Բ. Անցյալ 1928-29 տնտեսական տարում վերոհիշյալ հարցերի շուրջը սպառկոոպերացիայի աշխատանքը արտահայտվել է հետևյալում՝

1. Կազմակերպված են 104 լիկկայաններ, վորոնք ընդգրկել են 2600-ի չափ սովորողներ։
2. Խրճիթ ընթերցարաններին կից (վորոշ տեղերում նաև տնային վայրերում) կազմակերպված են 108 կոոպերատիվ անկյուններ։
3. Հարց ու պատասխանի յերեկոներ կազմակերպված են 165 անգամ։
4. Զեկուցումներ կոոպերատիվ խնդիրների շուրջը կազմակերպված են 84 անգամ։
5. Կազմակերպված է յերեք եքսկուրսիա դեպի Անդրկովկասյան և ՍԽՀՄ կենտրոնները, վորին կոոպերատիվ ցանցից մասնակցել են 100-ի չափ աշխատողներ։ (Կոոպ նախագահների և այլ աշխատողների եքսկուրսիաները մինչև Բաքու Լենինգրադ և այլն։
6. Կոոպերացիան ակտիվ կերպով մասնակցել է քաղաքական կամպանիաների և մանավանդ կոոպերացիայի միջազգային տոնի անցկացմանը։

Մյուս խնդիրների ուղղությամբ անշուշտ որոշ աշխատանք կատարված է, բայց չկա ճիշտ հաշվառում։ Պետք է արձանագրել, որ ընդհանրապես կուլտ աշխատանքների հաշվառման գործը անցյալ տարի դրված է յեղել վատ հիմքերի վրա, ավելի ճիշտ կլինի ասել այնպիսին չի տարվել։

Գ. Վերևում թվելով կուլտ մասսայական աշխատանքների կարևոր բնագավառները և հիշելով այդ ուղղությամբ կատարվածը, պետք է արձանագրել, որ կուլտ մասսայական աշխատանքը սպառողական կոոպերացիայի սիստեմում դեռ ևս մնում է նրա ամենաթույլ կողմերից մեկը, որը բավարար չափով դեռ ևս չի ծավալվել քաղաքում (բանվորական ակումբներում, կարմիր անկյուններում և առանձին ձեռնարկություններում) և գյուղում։ Կոոպերացիան իր ուշադրության կենտրոնը դարձնելով կուլտ աշխատանքի առանձին բնագավառների վրա (կինո ռադիո, գրականության վաճառքի կազմակերպումը գյուղում, կադրերի պատրաստում, կենցաղային ձեռնարկությունների կազմակերպում, լիկկայանների թվի աճումը և այլն) բավարար չափով չի ծավալել իր աշխատանքը ավելի մասսայական կուլտ ձեռնարկումների ուղղությամբ։ Առանձնապես դեռ ևս անբավարար է ազգային փոքրամասնությունների մեջ տարվող կուլտ աշխատանքը։

Դ. Մասսայական կուլտ աշխատանքի բնագավառում սպառկոոպերացիան պետք է ուժեղացնի իր աշխատանքները, առաջիկայում իրագործելով հետևյալը՝

1. Անգրագիտության վերացման լիկկայանների թիվը աստիճանաբար ավելացնել 29-30 տարում հասցնելով մինչև 220-ի, ընդգրկելով մինչև 7000 սովորող։ Պայքարել լիկկայաններից վաղաժամ դուրս գալու դեմ, լիկկայանները ժամանակին ապահովելով անհրաժեշտ հարմարություններով, հետևել պարապմունքների ընթացքին և այլն։

2. Խրճիթ ընթերցարանների վերակազմակերպության հետ միասին վերակազմել և աշխուժացնել նաև կոոպ անկյունների աշխատանքները, մասնակցել նրանց կահավորման և այլն։ Քաղաքներում նույնպես կազմակերպելու կոոպ անկյուններ առանձին արտադրական ձեռնարկություններին կից։

3. Ավելի հաճախակի կազմակերպել հարց ու պատասխանի յերեկոներ կոոպերատիվ և այլ այժմեական խնդիրների շուրջը։ Կազմակերպել նույնպես զրույցներ և զեկուցումներ նույն խնդիրների մասին։ Այդպիսիները դարձնել հետաքրքիր և բովանդակալից։

4. Կուլտ աշխատանքը կանանց և յերիտասարդության մեջ պետք է ուժեղացնել նրանց պատրաստման, վերապատրաստման, խմբակների կազմակերպման և առաջ քաշումների միջոցով։ Կանանց և յերիտասարդներին առանձնապես պետք է առաջ քաշել կուլտուրական և գեղարվեստական աշխատանքների ասպարեզում։

5. Ջնայած կարճատև կոոպ խմբակների կազմակերպման փորձը հիմնականում իրեն չի արդարացնում և մենք պետք է հետագայում այդպիսինը փոխարինենք կուրսերով և նպատակային կարճատև կուրսեր կազմակերպելով (ըստ առանձին մասնագիտությունների) այնուամենայնիվ մինչև մեր կուրսային ձեռնարկումների ցանցի ընդարձակումը պետք է կազմակերպել կոոպ-խմբակներ այժմյան ձևով, վորոնք մեր կոոպ ակտիվին տալիս են ընդհանուր գիտելիքներ կոոպ հարցերի շուրջը։ Հանձնարարել կուլտբաժնին հրատարակել հայերեն լեզվով ձեռնարկ՝ կոոպ. խմբակների աշխատանքների համար։

6. Հակակրոնական աշխատանքը մեր անելիքների մեջ կարևոր տեղ պետք է բռնի։ Սպառկոոպների կուլտ կոմիսիաները պետք է ակտիվ կերպով մասնակցեն հակակրոնական բջիջների կազմակերպմանը և նրանց աշխատանքներին։

7. Նույնը պետք է ասել հակաալկոհոլային աշխատանքի մասին։ Ժամանակն է վորպեսզի մեր հասարակական սննդի վայրերից դուրս նետվի գինին և օղին։ Ժամանակն է և պետք է բոլորովին դադարեցնել նրանց գործածությունը։ Սրա համար հարկավոր է ագիտացիա, բացատրական աշխատանք՝ ալկոհոլի վնասակարության մասին, վորը պետք է տանեն մեր կուլտ կոմիսիաները։

8. Եքսկուրսիաների կազմակերպումը տալիս է մեծ արդյունքներ մեր տեղական աշխատողների պատրաստությունը բարձրացնելու և փորձ ձեռք բերելու գործում։ Արժեքավոր են մանավանդ հեռավոր եքսկուրսիաները, վորոնք ունեն քաղաքական և ինտերնացիոնալ քաղաքական նշանակություն։ Այդ պատճառով պետք է այս տարի ևս Հայկոոպի կուլտ բաժինը կազմակերպի եքսկուրսիաներ ցանցի աշխատողների համար։ (Անդրկովկասի ՍԽՀՄ մասշտաբով, մասնակցությամբ մինչև 100 հոգու ուղարկելով նրանց մաս-մաս և փոքր խմբերով)։

9. Թերթերի և ժուռնալների տարածման ուղղությամբ սպառկոոպերացիան դեռ ևս վոչինչ չի արել, այնինչ անհրաժեշտ է այդ աշխատանքը ծավալել գրականության տարածման հետ միասին։ Այս ուղղությամբ թե Հայկոոպը և թե ցանցը անմիջապես պետք է ձեռնարկեն գործնական աշխատանքի։

20. Շարունակելով մասնակցել կոոպերատիվ քաղաքական կամպանիաների անցկացմանը անհրաժեշտ է ավելի ակտիվ և ցուցադրական դարձնել այդ մասնակցությունը։

11. Կոոպերացիան պետք է տանի ընդհանուր քաղաքական դաստիարակչական աշխատանք իր անդամն. շրջանում։ Այս աշխատանքը պետք է տանել՝ ա) մասնակից անելով կոոպ ակտիվին տեղերում կազմակերպ-

վող քաղգրագիտական խմբակներին և կուրսերի աշխատանքներին. բ) սիստեմատիկ կերպով կազմակերպելով զեկուցումներ և զրույցներ քաղաքական և տնտեսական առանձին կարևոր խնդիրների շուրջը։

12. Կուլտ-աշխատանքը քոչվորների մեջ մինչև այժմ տարվել են վոչ բավարար չափով, հարկավոր է ուժեղացնել այդ աշխատանքը ունենալով հատուկ ծրագիր։ Նրանց մեջ պետք է տանել քաղաքական, կուլտ-գրագիտական աշխատանք, կազմակերպել կենցաղային ձեռնարկներ, լեկցյաներ, գրականության տարածում, կինո-ռադիո, լրագրերի տարածում և այլն։

13. Պիոներական կազմակերպություններին պետք է ոգնել կազմակերպչական և նյութական տեսակետից։ (Վերջինս վոչ ավել կուլտ-ֆոնդի 2 տոկոսից)։ Մեծ բանկոոպներին և սպառկոոպներին կից կազմակերպել պիոներական կոլեկտիվներ, տալ նրանց շենքի և այլ հարմարություններ։

14. Կուլտ կենցաղային աշխատանքներն ազգային փոքրամասնությունների մեջ պետք է տարվեն առանձին ծրագրով։ Ազգային փոքրամասնություն կազմող սպառկոոպների նկատմամբ պետք է ավելի ուժեղացնել կենդանի կապը, ֆինանսական ոգնություն տալով նրանցից թույլ կոոպերատիվներին և այլն։

15. Անհրաժեշտ է կարգավորել և տանել վերոհիշյալ բոլոր մասսայական աշխատանքների հաշվառումը։ Դրա համար մշակել հատուկ ձև և ուղարկել տեղերին։ Վոչ մի աշխատանք առանց հաշվառման ահա մեր ամենակարևոր անելիքներից մեկը։

## Կուլտ-կենցաղային աշխատանքը տանող մարմինները տեղերում

1. Սպառկոոպերացիայի սիստեմայի կուլտ-կենցաղային աշխատանքը տանող մարմիններն են՝

ա) Կուլտ-կոմիսիաները (կոոպ վարչություններին կից և նրանց կողմից առաջադրված).

բ) Կոոպ-կուլտ լիազորները (առանձին ձեռնարկություններում)։

գ) Կուլտ-լիազորները (առանձին ազատված աշխատողներ մեծ բանկոոպներում և սպառկոոպներում։

դ) Յերևանի և Լենինականի բանկոոպներին կից կուլտ-յենթաբաժինները համապատասխան թվով ազատված աշխատակիցներով։

2. Ընդունելով հիմնականում ճիշտ կուլտ-աշխատանքը տեղերում տանող մարմինների վերոհիշյալ սխեման, խորհրդակցությունն արձանագրում է հետևյալ թերությունները, վորոնք գոյություն ունեն նրանց աշխատանքների մեջ։

ա) Դեռևս վոչ բոլոր սպառկոոպներում կազմակերպված են կուլտ-կոմիսսիաներ (ցանցի 7—10 տոկոսում).

բ) Շատ տեղերում կուլտ-կոմիսսիաները գոյություն ունեն միայն թղթի վրա և վոչ մի աշխատանք չեն տանում։ Նրանցից շատերը նույնիսկ ծանոթ չեն իրենց ֆունկցիաների հետ և այդպիսին հասկանում են միայն կուլտ-ֆոնդի նախահաշիվ կազմելում և գումարներն ուրիշ կազմակերպություններին հանձնելում, փոխանակ իրենք տանելու այդ աշխատանքը։

3. Ազատված կուլտ-հրահանգիչների թիվը շատ քիչ է (ընդամենը 11 հոգի. ամբողջ ցանցում)։ Կուլտ-կենցաղային աշխատանքները տեղերում աշխուժացնելը և ուժեղացնելը մեծ չափով կախված է տեղերում կուլտ-կոմիսսիաների աշխուժացումից և կուլտ-հրահանգիչների թիվն ավելացնելուց, վորի ուղղությամբ պետք է կատարել հետևյալը՝

ա) Բոլոր այն սպառկոոպներում, վորտեղ մինչև այժմ դեռ չեն կազմակերպված, անմիջապես կազմակերպել կուլտ-կոմիսսիաներ.

բ) Այն սպառկոոպներում, վորտեղ կան կուլտ-կոմիսսիաներ՝ ուժեղացնել նրանց աշխատանքը, վերակազմել թույլերին և անգործունեության մատնվածներին։

Բացատրել նրանց անելիքները, կազմել աշխատանքի ծրագիր և նախահաշիվ. Այս խնդրում մեր լոզունգը պետք է լինի «Վոչ մի սպառկոոպ առանց գործունյա կուլտ կոմիսսիայի, առանց աշխատանքի ծրագրի և առանց կուլտ-ֆոնդի նախահաշվի»։

գ) Առաջիկայում տեղերում կուլտ-հրահանգիչների թիվն ավելացնելու նպատակով, ընդունել, վոր ազատված կուլտ հրահանգիչները պետք է ունենան բոլոր այն սպառկոոպները, վորոնք ունեն յերկու հազար կոոպանդամներ և ամսական 50,000 ռուբլու շրջանառություն։

4. Յերևանի և Լենինականի բանկոոպներում կուլտ-յենթաբաժինների կազմակերպումը համարել միանգամայն հասունացած հարց և ուժեղացնել նրանց նոր կազմակերպված կուլտ-յենթաբաժինները։

5. Հրատարակել ձեռնարկ (հայերեն լեզվով) կուլտ-կոմիսսիաների աշխատանքների մասին։

6. Բոլոր մեծ արտադրական ձեռնարկներում, կոոպբյուրոներին կից ունենալ կոոպ կուլտ-լիազորներ, վորոնք տեղերում աջակցելու յեն մեր կոոպ-կուլտ-կրթական ձեռնարկումներին։

## Կուլտ ֆոնդը յեվ նրա օգտագործումը

1. Սպառողական կոոպերացիան տարեց տարի աճելով բավական ընդալի գումարներ է հատկացնում կուլտ կենցաղային աշխատանքներին

(10 տոկոս զուտ օգուտից և 0,25 տոկոս շրջանառությունից—Հայկոոպը և 15 տոկոս օգուտից ու 0,25 շրջանառությունից—գյուղական ցանցը, 25 տոկոս զուտ օգուտից և 0,25 տոկոս շրջանառությունից—քաղաքային և բանվորական կոոպերատիվները)։

Այս բոլոր գումարներն ամբողջ սիստեմայում կազմել է 1928—29 տնտ. տարում 180 հազար, վորից Հայկոոպի կուլտ ֆոնդը 75 հազար ռուբլի։ Իսկ 29—30 տնտ. տարում կազմվելու յե 280 հազար ռուբլու և վորից Հայկոոպի կուլտ-ֆոնդը 100 հազար ռուբլու։

2. Ինչպես են ծախսված այդ կուլտ-ֆոնդերը և ինչ նպատակների վրա։ Այս մասին պետք է արձանագրել հետևյալ հիմնական թերությունները՝

ա) Մի շարք կոոպերատիվներ բոլորովին չեն կազմել կուլտ ֆոնդի նախահաշիվներ և սովորաբար ինչ ծախս, վոր պատահական կերպով կատարել են (վորը չի նախատեսնված իրենց տարեկան պլանում և նախահաշվում), տարվա վերջում գցել են կուլտ ֆոնդի հաշվին։

բ) Մի շարք կոոպերատիվներ ճիշտ է ունեն կազմած կուլտ-ֆոնդի առանձին նախահաշիվներ բայց այդպիսին նրանց մոտ գոյություն ունի ձևականության համար։ Ամեն տեսակի ծախսեր գրում եյին կուլտ-ֆոնդի վրա և շատ անգամ այնպիսի ծախսեր, վորոնք բոլորովին կապ չունեն կուլտ-ֆոնդի հետ, առանց նկատի ունենալու նախահաշվում այդ ծախսի համար գումար կա հատկացված թե վոչ։

գ) Մի շարք կոոպերատիվներ կուլտ ֆոնդը բոլորովին չեն ծախսում համահավասար չափով՝ կուլտ աշխատանքների բոլոր ձևերի վրա. որինակ մի վորևիցե սպառկոոպ յեթե ունի 1000 ռ. կուլտ-ֆոնդ, բաց է անում մի մանկապարտեզ ամբողջ կուլտ ֆոնդը ծախսում է նրա վրա և ուրիշ վոչ մի աշխատանք չի կատարում։

դ) Կան և այնպիսի սպառկոոպներ, վորոնք մինչև որս էլ կուլտ-աշխատանքները չեն համարում իրենց գործը, կուլտ-ֆոնդը միանգամից տրամադրում են կամ քաղլուսվարին, կամ Լուսբաժնին և իրենք քաշվում են մի կողմը։

յե) Կան և բազմաթիվ դեպքեր, վորոնք ցույց են տալիս թե ինչպես սպառկոոպների կուլտ-ֆոնդերն ուղղակի ցրվում են առանց իսկական նպատակին ծառայելու և առանց սպառկոոպի կուլտ կոմիսիայի կողմից ծախսվելու։ Մինչև որս էլ դեռ շարունակվում է այն ցավոտ խնդիրը, յերբ տեղական մի շարք որգաններ ամեն կերպ աշխատում են սպառկոոպից փող պոկել և փաստորեն այդպես էլ անում են։ Շատ վայրերում ուղղակի պարտադիր վորոշումներ են կայացնում սպառկոոպի կուլտ-ֆոնդից հատկացումներ կատարելու այս կամ այն այնպիսի աշխատանքների համար, վորոնք վոչ մի կապ չունեն կուլտ ֆոնդի հետ և չի յել նախատեսնված կուլտ ֆոնդի նախահաշվում։

դ) Սպառկոոպի նախագահներից շատերը հաճախ «վատամարդ» չլինելու համար և «կուլտ-ֆոնդից միանգամից իրենց գլուխն ազատելու համար» կատարում են նման հատկացումներ և քաշվում են մի կողմը։

3. Կուլտ խորհրդակցությունն արձանագրում է, որ նման յերևույթները ոչ միայն անթույլատրելի յեն և պախարակելի, այլև ուղղակի հանցագործ վերաբերմունք դեպի կուլտուրական աշխատանքը։ Այս թերությունները վերացնելու և կուլտ-ֆոնդերն իրենց նպատակին ծառայելու նպատակով, պետք է կիրառել հետևյալ միջոցները՝

ա) Բոլոր սպառկոոպները պետք է ժամանակին կազմեն և ունենան կուլտ-ֆոնդի ոգտագործման նախահաշիվներ և իրենց աշխատանքները տանեն համաձայն այդ նախահաշվի (հաստատված Հայկոոպի կուլտ-բաժնի կողմից)։

բ) Կուլտ ֆոնդի նախահաշվում յեղած գումարները պետք է ծախսեն իրենք սպառկոոպները, նախատեսնված նպատակներով և ոչ թե այդ գումարները հանձնեն այս կամ այն կազմակերպության։

գ) Ոչ մի սպառկոոպ կուլտ-ֆոնդի հաշվին չպետք է կատարի այնպիսի ծախսեր, որոնք կապ չունեն կուլտ-ֆոնդի հետ։

Կուլտ-ֆոնդի նախահաշիվների խախտումները, ուրիշ կազմակերպությունների գումարներ տրամադրելը և կուլտ-ֆոնդից նրա հետ կապ չունեցող ծախսեր կատարելը հավասար պետք է համարել զեղծարարության և ցուցադրական դատեր կազմակերպել ու խիստ պատիժների յենթարկել նրանց պատասխանատուներին։

# ՑՈՒՑԱԿ

## Սպառկոոպերացիայի Համահայաստանյան առաջին կուլտ-խորհրդակցության պատգամավորների

| № | ԱԶԳԱՆՈՒՆ, ԱՆՈՒՆ | Ո՞ր սպառկոոպից | Ինչ պաշտոն է վարում կոոպ գծով | Սոցիալ. դրութ. | Կուսակցականութ. |
|---|---|---|---|---|---|
| 1 | Ռոմանով Ռոման | Զայքենդ | Կուլտկ. ն. | Բատրակ | կուսակց. |
| 2 | Մարտիրոսյան Սարքի | Պեմզա | — | Ծառայող | կոմյերիտ. |
| 3 | Մարինյան Մանվել | Գյուլագ. | Կուլտկ. ն. | Կոլխոզնիկ | » |
| 4 | Հարությունյան Վարդ | Համասյա | » » | Կոլխոզնիկ | կուսակց. |
| 5 | Գրիգորյան Սամսոն | Պեմզա | » » | Բանվոր | » |
| 6 | Բանդոհանյան Անդրանիկ | Մ. Պարնի | Վարչ. անդ. | Չք. կոլխ. | կոմյերիտ. |
| 7 | Բաբայան Հայրապետ | Դիլիջան | Կուլտկ. անդ. | Ծառայող | կուսակց. |
| 8 | Կարապետյան Վարդգես | Ն.-Բայազ. | Կուլտուրն. | Չք. կոլխ. | կոմյերիտ. |
| 9 | Վարոսյան Հարություն | Ղարաքիլ. | Կազմբաժ. վ. | Ծառայող | կուսակց. |
| 10 | Հակոբյան Համայակ | Արամուսի | Կոոպ վ. ն. | Կոլխոզնիկ | » |
| 11 | Գրիգորյան Մանուկ | Աղբաշ | Կուլտկ անդ | Չք. կոլխ. | կոմյերիտ. |
| 12 | Գևորգյան Սարգիս | Մալլադեչ. | Վարչ. նախ | Կոլխոզնիկ | կուսակց. |
| 13 | Խաչատրյան Գարեգին | Ղզլղոչ | » » | » | » |
| 14 | Բաբաջանյան Սարգիս | Կուրթան | Կուլտկ. ն. | » | » |
| 15 | Մուրադյան Վաղինակ | Մեղրի | Առքաժվար | Բանվոր | » |
| 16 | Սարգսյան Վաղինակ | Ղարաքիլ. | Կուլտուրն. | Կոլխոզնիկ | » |
| 17 | Սուքասյան Սիմոն | Հոռոմ | Վար. ն. անդ. | Միջակ գյուղ. | անկուսակ. |
| 18 | Պապոյան Համայակ | Շահալի | Կուլտկ. ն. | Կոլխոզնիկ | կուսակց. |
| 19 | Խաչատրյան Պարգև | Համամլի | » » | Ծառայող | անկուսակ. |
| 20 | Աթոյան Միխայել | Շամշուլ | » անդ. | » | կուսակց. |
| 21 | Гамазов Петр | Ալլավերդի | » նախ. | Рабочи | безпарт, |
| 22 | Снегарев Иван | Приволн. | Пред. коп. | Колхозн. | партийн. |
| 23 | Ջնդոյան Մարտիրոս | Դյուզքենդ | Կուլտուրն. | Կոլխոզնիկ | կուսակց. |
| 24 | Աբրահամյան Սենիկ | Դավալու | » | » | կոմյերիտ. |
| 25 | Խաչատրյան Գևորգ | Հաջիխալիլ | Կուլտու. անդ. | » | կուսակց. |
| 26 | Արամյան Հրաչ | Աշտարակ | » » | Միջ. կոլխոզ. | կոմյերիտ. |
| 27 | Գրիգորյան Արտաշես | Թալին | Կուլտկ. անդ | Չք. կոլխ. | անկուսակ. |
| 28 | Հակոբյան Գառնիկ | Արփա | Կուլտկ. ն. | Ծառայող | կոմյերիտ. |
| 29 | Աղայան Մկրտիչ | Փանիկ | » անդ. | » | անկուսակ. |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| 30 | Կոսայան Հարություն | Վաղարշապ. | Կուլտուրն. | Ծառայող | կոմյերիտ. |
| 31 | Հայրապետյան Արաքսիա | Ալլավերդի | » | » | » |
| 32 | Հակոբյան Սիրուշ | Գոյգյումբ. | Կուլտկ. ն. | Ջք. կոլխ. | անկուսակ. |
| 33 | Սարգսյան Վաչագան | Ոշական | Աոբաժվար | Կոլխ. միջ. գ. | կուսակց. |
| 34 | Ղազարյան Խաչիկ | Մարգարա | Կուլտկ. ն. | Ջք. կոլխ. | » |
| 35 | Ամարյան Սամվել | Գորիս | » » | Ծառայող | » |
| 36 | Պողոսյան Լևոն | Քեշիշք. | Նախագահ | » | » |
| 37 | Դանղյան Արտո | Փարաքար | Կուլտկ. ն. | Կոլխոզնիկ | անկուսակ. |
| 38 | Կարապետյան Սերգեյ | Կոտայք | » » | Ջք. կոլխ. | կուսակց. |
| 39 | Շախբազյան Գևորգ | Ուռուտ | » անդ. | » » | անկուսակ. |
| 40 | Վոսկանյան Ոհաննես | Իմանշալու | Վարչ. անդ. | Միջ. կոլխ. | » |
| 41 | Ցոլյան Մուշեղ | Երևանից | Կուլտուրն. | Ծառայող | կոմյերիտ. |
| 42 | Թոխմախյան Արաքսիա | » | » | Բանվոր | կուսակց. |
| 43 | Պետրոսյան Շուշանիկ | Դսեղ | Կուլտկ. ն. | Ծառ. կոլխ. | անկուսակ. |
| 44 | Միրզաևա Խատիջա | Նարիմանլ. | Վարչ. անդ. | Ջքավոր | կոմյերիտ. |
| 45 | Սմբատյան Վասիլ | Ն. Խաթուն. | Վարչ. ն. | Ծառայող | կուսակց. |
| 46 | Կարապետյան Աշոտ | Ղուրդուղ. | Վարչ. փոխն. | » | անկուսակ. |
| 47 | Պետրոսյան Լիպարիտ | Ղամարլու | Վարչ. ն. | » | կուսակց. |
| 48 | Կարապետյան Նիկոլայ | Ցելենովկա | Վարչ. անդ. | » | անկուսակ. |
| 49 | Պետրոսյան Տիգրան | Ախտա | » » | » | կուսակց. |
| 50 | Մելիքսեթյան Անդրանիկ | Շնող | Կուլտկ. ն. | » | կոմյերիտ. |
| 51 | Սահակյան Երվանդ | Զորագես | » անդ. | Բանվոր | կուսակց. |
| 52 | Բեջանյան Աշիրբեգ | Կողբ | » նախ. | Կոլխոզնիկ | » |
| 53 | Շախիկյան Հակոբ | Հաշկոպմեդ. | Փոխ նախ. | Հաշմանդ. | անկուսակ. |
| 54 | Քոչարյան Վասիլ | Ջարխեչ | Կուլտկ. ն. | Ջք. գյուղ. | կուսակց. |
| 55 | Քոչարյան Սուրեն | Վորոնցով. | Կուլտուրն. | Բանվոր | » |
| 56 | Сироваткина Екатерина | » | сл. культк. | бедн. | безпарт. |
| 57 | Шихов Борис | » | к. механик | рабочий | » |
| 58 | Գրիգորյան Սենեքերիմ | Ղամարլու | Գործակ. | Ծառայող | անկուսակ. |
| 59 | Մաղոյան Նիկոլայ | Ալափարս | Կոպ. վարչ. ն. | Բանվոր | կուսակց. |
| 60 | Շահինյան Պարույր | Աղին | Կուլտկ. ն. | » | անկուսակ. |
| 61 | Ջաթալբաշյան Պետրոս | Ջաջուռ | » » | Ծառայող | » |



# ՈՒՂՂՈՒՄ

Գրքույկիս 21 րդ յերեսում «Հրատարակչություններն ըստ թվերի» պարբերության տակ բաց է թողնված հետևյալ աղյուսակը.

| 1923/24 թ. | | | 1925 թ. | | | 1926 թ. | | | 1927 թ. | | | 1928/29 թ. | | | 1929/30 թ. 1-ին կիսամ. | | | Ընդամենը 1-ին յեռ. | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| Գիրք | Մամուլ | Տիրաժը | Գիրք | Մամուլ | Տիրաժը | Գիրք | Մամուլ | Տիրաժը | Գիրք | Մամուլ | Տիրաժը | Գիրք | Մամուլ | Տիրաժը | Գիրք | Մամուլ | Տիրաժը | Գիրք | Մամուլ | Տիրաժը |
| 5 | 9 | 2300 | 11 | 13 | 245 | 11 | 32 | 22 | 5 | 6 | 13 | 16 | 23 | 44 | 13 | 18 | 55 | 61 | 100 | 16060 |

ԳԱԱ Հիմնարար Գիտ. Գրադ.
220039489

395

A 39489